Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10057

ՀՐԱՏ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆՑԻ № 7.

ԶՐԱԴԱՇՏ

Կազմեց Մ. Թումանդշեանց

ԵՐԵՒԵԼԻ ՄԱՐԴԿԱՆՑ ԿԵՆՍԱԳՐԱՒԹԻՒՆՆԵՐ

295
Զ-90

Ե. ԹՈՓՋԵԱՆԻ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

„ԼՈՅՍ“

Սեղանի (1 ռ.) պատի (50 կ.) և ծոցի (20 կ.) պատկերազարդ օրացոյցներ 1904 թ.

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ

ԵՒ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՀԱՐՈՒՍՏ ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐՈՎ

Աշխատակիցներն են՝ Ահարոնեան Ա., Առաքելեան Հ., բժ., Արծրունի Վ., բժ. Բուզուզեան Ա., Զաւարեան Ս., Թումանեան Յ., Խաչակեան Աւ., Լէօ., Լիսիցեան Ստ., Ատամնաբոյժ Կաճկաճեան, Մալխասեան Ստ., Ատամնաբոյժ Մակարեան, Մեծատուրեան Գ., Յովհաննիսեան Միք., Յովհաննիսեան Տ., բժ. Յովհաննէսեան Հ., Շանթ, Շիրվանզադէ, Զորբեան Ա., Պոշեան Պ., Տիգրանեան Ն. (երաժիշտ), Տիգրանեան Ս., Տէր Մինասեան Արշ. քհն., Տէր-Միրաքեան Յով., բժ. Օհանեան Քր., Փափազեան Վրթ., դ-ր Փաստրմաճեան և այլն։

«Լոյսն» իր շքեղ արտաքինով—(բազմաթիւ գունատիպ պատկերներ)—և բազմակողմանի բովանդակութեամբ, լինելու է ամեն մի ընթերցողի խորհրդատու ընկերը, ամեն մի ընտանիքի սեղանի զեղեցիկ զարդը։

Մանրամասնութիւնների մասին իր ժամանակին կ՚յայտարարուի պարբերական թերթերում։

Սեղանի օրացոյցում կ՚տպագրուին յայտարարութիւններ բոլոր լեզուներով. վճարը—2 կոպ. իւրաքանչիւր բառի համար։ Հարիւր բառից աւելի յայտարարութիւններին 20% զիջումն։

ԴԻՄԵԼ *Тифлисъ* Е. Топчіану, Троицкая № 11.

Н АРМ. Զ-809₂

04 NOV 2009

295 Զ-90

Զ843

PA 71163

ԵՐԵՒԵԼԻ ՄԱՐԴԿԱՆՑ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՏ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆՑԻ № 7.

ԶՐԱԴԱՇՏ

Կազմեց Մ. Թումանեան

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԲՐԱԳԱՏԻՊ» ՏՊԱՐԱՆ
1903

13 APR 2013

10057

Доз. цензурою. С.-Петербургъ, 16-го Сентября 1903 года.

«Пушкинская Скоропечатня», Лештуковъ, 4.

3985-86



ՕՐՄՈՒԶԴ

(Պերսեպոլիսի աւերակներից.)

Ա.

Նախնի իրանցոց ու պարսկաց կրօնը զանազան անուններ է կրում, որոնցից աւելի յարմարը մազդէականութիւնն է, նրանց գլխաւոր աստուծոյ Ահուրա-Մազդի կամ Օրմուզդի անունով։

Մազդէականութեան հիմնադիրը իրանական մարգարէ Զրադաշան է։ Իրանի ու Պարսկաստանի այդ ազգային կրօնը պատկանում է հին աշխարհի նշանաւոր կրօնների թւին, դերազանցելով նախաքրիստոնէական միւս կրօնները իւր պարզ դաղափարով՝ ճշմարտութեան կամ անճշմարտութեան, և պարտաճանաչութեան մասին։ Զրադաշտը կարեւոր տեղ է բռնում կրօնների երևելի հիմնադիրների շարքում՝ Մովսէսի, Կոնֆուցիոսի, Բուդդայի և Մահմէդի։

Զրադաշտը կամ, ըստ հին-պարսկական լեզուի, Զարատուստրա, ծնւել է, աւանդութեան նայելով, արևմտեան Իրանում (այժմեան Ադրբէջանում) ԽԹՆԵՐՈՐԴ դարում Քրիստոսից առաջ։ Նրա ծնող

ները, Փիրուշասպը և Դուզեդէն, պատկանում էին բակտրիական ծագում ունեցող մի անուանի տոհմի։

Նոյն աւանդութիւնը պատմում է, թէ Զրադաշտի երեխայութիւնը և պատանեկութիւնը անցել է անընդհատ կռուի մէջ դևերի ու չար ոգիների հետ, որոնք զանազան միջոցներով աշխատում էին խորտակել Զրադաշտի կեանքը։ Կռուից և մարդկային անաղնութիւնից յոգնած Զրադաշտը անապատ է քաշւում և մեկուսանում մի քարայրում։ Այստեղ արժանանում է նա երկնային յայտնութեան. աւետիք է բերում նրա համար Օրմուզդի ամենասիրելի հրեշտակապետ Վոդոմանը։

Հրեշտակապետը տանում—կանգնեցնում է Զրադաշտին Օրմուզդի դահի առաջ։ Օրմուզդը յանձնում է Զրադաշտին Ավէստա—սուրբ գիրքը, բերանացի խրատներ է տալիս, և ուսուցանում է դաւանութեան, մարդկային պարտաւորութեանց ու փրկութեան ճանապարհների սկզբունքները և չար ոգիների դէմ մաքառելու միջոցները։

Զրադաշտը թողնում է անապատը, սակայն չէ ազատւում դևերի հալածանքներից և գլխաւոր դևապետի՝ չարութեան ոգի Ահրիմանի դայթակղեցուցիչ խոստումներից։ Այդ յարձակումների և դայթակղութիւնների դէմ իբրև զէնք ծառայում է Զրադաշտին հոնովէը կոչւած անյաղթելի աղօթքը։

Իւր թափառանքի միջոցին Զրադաշտը յայտնւում է երևելի Կիւրոսի հաւի՝ պարսից Գիստասպ թագաւորի պալատում։ Այստեղ նա շատ փորձանքների է ենթարկւում, մաքառում է պալատականների խարդաւանքների և չարամտութիւնների դէմ, բանակռուի մէջ է մտնում զանազան իմաստունների ու քուրմերի հետ, բայց վերջ ի վերջոյ Զրադաշտը յաղթող է հանդիսանում. Գիստասպ թագաւորը ամբողջ ընտանիքով և նրա բոլոր մերձաւորները ընդունում են իրանական մարդարէի կրօնը։ Զրադաշտը ամուսնանում է մեծ-վեղիր Զամամի աղջկայ հետ և այդպիսով դառնում է թագաւորի ամենամօտ խորհրդականների աղգականը։

Զրադաշտի կրօնը տարածւում է նոյնպէս Պարսկաստանի և Իրանի սահմաններից դուրս և նրա անունով պատերազմ են մղում հարևան թուրանցիների դէմ։ Սակայն չը նայած յաղթանակին, որ տանում են նոր կրօնի կողմնակիցները՝ ինքը Զրադաշտը սպանւում է պատերազմի դաշտում թշնամու ձեռքից։

Բ.

Զրադաշտի կրօնի բնորոշ կողմն է դուալիզմը, այսինքն այն միտքը, թէ գոյութիւն ունին երկու, իրար դէմ կռւող, ոյժեր. բարի ոյժը, որի ներկայացուցիչը Օրմուզդն է, և չար ոյժը, որի ներկայ-

ացուցիչը Ահրիմանն է։ Ըստ իրանցիների հասկացողութեան՝ մի խոր անդունդ բաժանում է տիեզերքը երկու մասի։ Մի մասում թագաւորում է լոյսը, ճշմարտութիւնը, կրօնը, իսկ միւս մասում—խաւարը, ստութիւնը։ Օրմուզդը՝ ճշմարտութեան ներկայացուցիչը, ստեղծում է ամեն բարի բան, Ահրիմանը՝ ամեն ստութիւն և աւերմունք ու խորտակում է ամեն լաւ բան։ Օրմուզդ աստուածը ապրում է յաւիտենական լոյսի մէջ, Ահրիմանը՝ խաւարի հոգին, անսահման խաւարի մէջ։

Զնայելով մազդէականութեան դուալիստական բնաւորութեանը, նորա իդէալը մոնոթէիզմն է կամ միաստուածութիւնը, որովհետև Զրադաշտը նախագուշակում է Օրմուզդի վերջնական յաղթութիւնը և միայն նորա տէրութիւնը։ «Աշխարհքի վերջում—ասում է նա—բարին կը յաղթանակէ, իսկ չարը կ՝անհետանայ, ննջեցեալները յարութիւն կ՝առնեն և մի նոր կեանք կը սկսի»։

Զրադաշտի կրօնը խստութեամբ պահանջում էր իւր հետևողներից մարմնի և հոգու մաքրութիւն, մեծարանք դէպի Օրմուզդը և նրա հրեշտակները, աղօթքներ, յաճախակի զոհաբերութիւններ։ Նա պահանջում է աշխատել, մանաւանդ պարապել երկրագործութեամբ, փչացնել վնասակար կենդանիներին. քարոզում է պաշտել արեգակը, լուսինը, աստղերը, մեծարել կրակը, ջուրը և հողը։ Խիստ պա-

տիժ էր նշանակուած այն ամբարիշտների համար, որոնք կը պղծէին այդ սրբազան տարրերը։

Մազդէականութեան ծաղկած դրութիւնը ըսկսուեց պարսկական Ահմենիդ թագաւորական ցեղի տիրապետութեան ժամանակ, Կիւրոսի օրերից։ Եթէ պարսիկները յոյներից պարտութիւն չկրէին Մարաթոնում, Սալամինի և Պլատէի մօտ, գուցէ այդ կրօնը տարածուէր ամբողջ հին աշխարհում։

Մազդէականութիւնը մեծ հարուած ստացաւ, երբ, ըստ իրանական աւանդութեան, Ալէքսանդր Մակեդոնացին, գրաւելով Պարսկաստանը, փչացնել տուաւ մազդէականութեան սրբազան գրքերի մեծ մասը։ Բայց նա նորից կենդանացաւ Սասանեանների հարստութեան օրերում, 226 թուից մինչև 651 թիւը Քրիստոսից յետոյ։ Սասանեանների դարերը-ջանը շատ մեծ նշանակութիւն ունի հայ ազգի պատմութեան մէջ։ Նրանք ոչ միայն աշխատում-էին ստրկացնել Հայաստանը քաղաքական տեսակէտից, այլև ստիպում էին հայ ազգին ուրանալ քրիստոնէութեան ճշմարտութիւնները և ընդունել Զրադաշտի կրօնը։

Սկսեալ պարսից թագաւոր Յազկերտ առաջինից (415 թուից) շարունակ փորձեր էին անում՝ մազդէականութիւնը հայերի վրին փաթաթելու համար։ Հայ ազգը հաստատ կերպով կռւում էր Քրիստոսի հաւատի համար և Սասանեանների զօրութիւնը չկարո-

դայաւ խորտակել նրանց կրօնական դաւանանքը: Այդ կռիւը կազմում է հայոց պատմութեան ամենափայլուն էջը և Վարդան Մամիկոնեանի ու նրա զինակիցների դարը երբէք հայ ազգը չի մոռանայ:

Ամենամեծ անդթութեամբ հալածում էր հայերին Յազկերտ երկրորդը, որ ժառանգեց Իրանի գահը Ք. Ծ-ից յետոյ 441 թուին: Ի բնէ դոռոզ ու պատերազմասէր թագաւորը, որին բացի այդ գրգռում էր իւր մօտաւոր Միհր-Ներսէհը, նախ ըսկսեց հալածել քրիստոնէաներին իւր սեփական երկրում և յետոյ իւր մոլեգնութիւնը ուղղեց նաև դէպի Հայաստան: Զանազան խոստմունքներ անելով, քարշեց նա բոլոր նշանաւոր հայ նախարարներին իւր պալատը և յետոյ, սպառնալով քարուքանդ անել և ամայի դարձնել ամբողջ Հայաստանը, ստիպեց նրանց ընդունել մազդէականութիւնը: Այդ ուրացութեան լուրը յուզմունք առաջ բերաւ հայ ժողովրդի մէջ և նա վճռեց ընդդիմանալ զէնքը ձեռին: Երկար տևեց անհաւասար կռիւը Վասակ Սիւնեցու դաւաճանութեան պատճառով, բայց Վարդան Մամիկոնեանի անմոռանալի գործերը փրկեցին հայոց ազգի պատիւը և հաւատը, թէև քաջարի զօրապետը իւր զինակիցների հետ ընկաւ այդ անհաւասար կռուի մէջ, Աւարայրի դաշտում, Տղմուտ գետի ափին, 451 թուի Յունիսի 2-ին:

Վերջնական հարուած հասցրեց մազդէականութեան մահմեդականների տրշաւանքը: Արաբացիք գրաւելով Պարսկաստանը, սկսեցին հալածել Զրադաշտի հետևողներին և ստիպեցին նրանց մահմեդականութիւն ընդունել: Կրակապաշտների մնացորդները գաղթեցին Հնդկաստան, ուր գտան ապաստան և հովանաւորութիւն: Նրանցից ներկայումս Հնդկաստանում կան մօտ 100,000 հոգի, որոնք կազմում են, այսպէս կոչուած, Փարսերի գաղութը, Բոմբէյում: Սա մի բարեկեցիկ ու յարգուած համայնք է, որը յարաբերութիւն է պահպանում Պարսկաստանի (Եզդայի և Քիրմանի) կրակապաշտ Գէբրների հետ:

Գ.

Որպէս արդէն յիշել ենք, ըստ մազդէական կրօնի աստուածային դասակարգութեան պարագլուխն է դերագոյն աստուած Օրմուզդը (Ահուրա-Մազդա, որ նշանակում է այր-իմաստուն)—համապարփակ և ամենագէտ, մշտագոյ և անփոփոխ բարեցակամ, չխաբող և չխաբուող: Նա արթուն պահապան է և պաշտպան, հատուցում տուող և պատժի ենթարկող է: Նա է բոլոր բարեաց հայրը և ստեղծողը, նա է ստեղծել ստորերկրեայ աղբիւրները, որոնք կեանք են տալիս բոյսերին, անձրևը, որ ոռոգում է հողի մէջ ցանուած սերմերը: Նրա գահը երկնքումն է,

յաւիտենական լուսոյ թագաւորութեան մէջ։ Նրա դէմքը պատած է անընդհատ փայլով ու փառքով, նա շրջապատուած է հրեշտակապետներով և հրեշտակներով, որոնք կատարում են նրա հրամանները։ Հաւատացեալները կոչում են Օրմուզդին ամենամեծ, գերազանց, ամենախելացի, ահեղ, սրբազոյն, իմաստնագոյն, լաւագոյն և ամենաերջանիկ։

Իւր բնաւորութեամբ Օրմուզդը ամենից առաւել մօտենում է հրէական Եհովային։ Սակայն Օրմուզդը, ամենագէտ և ամենախելացի լինելով հանդերձ, ամենակարող չէ։ Խաւարի հոգին Ահրիմանը նրա մշտակայ հակառակորդն է, որ խորտակում է ամենայն բարիք, թէև Ահրիմանի իշխանութիւնը մշանջենաւոր չէ, իսկ Օրմուզդը եղել է և միշտ կըլինի։ Զրադաշտի ասելով, Օրմուզդից և Ահրիմանից առաջ գոյութիւն է ունեցել Նախայաւիտենական կամ ծայրագոյն Աստուած, որը և ստեղծել է Օրմուզդին և Ահրիմանին։ Իսկ Օրմուզդը ինքը չէ ստեղծել աշխարհը ինքնաբերաբար, այլ Նախայաւիտենականի հրամանով, որը անասելի բարձր է և միանգամայն անմատչելի՝ մարդկային մտքի համար։

Իւր աստուածային գործունէութեան մէջ Օրմուզդը ունի օգնականներ՝ ի դէմս հրեշտակապետների և հրեշտակների։

Օրմուզդի անմիջական օգնականներ են հրեշ-

տակապետները, որոնք կոչւում են ամշասպանդներ։ Սրանք թւով վեց են հետևեալ անուններով և կոչմամբ.

Վոհու-Մանօ բարի հոգին, հօտերի հովանաւոր.

Աշա-Վահիստա ամենամաքուրը, ամենասուրբը, կրակի պահապանը.

Սպէնտա-Արմատի իմաստնագոյնը, երկրի աստուածուհին.

Կշաթրա-Վաիրիա ցանկալի տիրապետութիւն.

Հաուրավատատ բուժիչը.

Ամէրէտատ անմահութիւն պարգևողը։

Ժամանակի ընթացքում ամշասպանդներին յատկացրին և ուրիշ պաշտօններ։ Վոհու-Մանօն դարձաւ խաղաղութեան հանճարը և բարեկեցութեան մատակարարը։ Աշա-Վահիստան համարւեց Իրանի հովանաւորը, բժշկականութեան հանճարը, երկրի վրա տիրապետող նախանձի վերացնողը. նա հալածում է ամբարտաւաններին, կախարդներին, որկրամոլ գայլերին, հիւսիսային սարսափելի մրրիկները, յաղթում է թուրանցիներին—այդ դևերին, որոնք, որպէս ասում է Զրադաշտը, տասնեակ հազարներով իջնում են հիւսիսից՝ յափշտակութիւններ անելու համար։ Հաուրավատատը հսկում է տարւայ եղանակների, ամիսների, օրերի բաժանման

ՀՍՍՀ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ

վրա։ Ամէրատատը կեանք ու զօրութիւն է տալիս բոյսերին, պտղատու և այլ ծառերին։

Ամիասպանդները, Օրմուզդի օգնականները նորա կազմակերպական գործունէութեան մէջ, մի քանի դէպքերում նորա ներկայացուցիչներն էլ են։ Հրեշտակապետներից մի աստիճան ցածր համարւում են հրեշտակները—իզէդները, որոնք ցրուած են տիեզերքի մէջ մեծ քանակութեամբ։ Դոցա թւին պատկանում է Ատար, Օրմուզդի որդին, որը միջնորդ է աստուածների և մարդու մէջ։ Նոյն դասակարգին են վերաբերում՝ Ապան—մաքուր ջրերի և հիւթերի պահապանը, Խուրշիդ—արեգակի հրեշտակը, Մահ—լուսնի հրեշտակը, Տիրը—զանազան աստղերի հրեշտակը, Հաոմա—բուժիչ և արգիւնաբեր հրեշտակը, որի անունով կոչւում էր մի սրբազան բոյս, որից ստացւող հիւթը գործադրում էին զոհաբերութիւնների ժամանակ։ Վերջապէս այդ կարգին էր վերաբերում Միթրա—անմահակ երկրի բեղմնաւորող հրեշտակը և ուրիշ բազմաթիւ իզէդներ։

Իզէդների շարքում Զրադաշտի երկնային դասակարգութեան մէջ գոյութիւն ունէին մարդու պահապան հրեշտակները—ֆրավարշները կամ ֆէրուէրները։ Սրանք կազմում են իւրաքանչիւր մարդու հոգոյ երկւորեակը։ Օրմուզդը և իւր հրեշտակները նոյնպէս ունէին իրանց ֆրավարշները։ Այդ

պահապան հրեշտակները մարդու մահից յետոյ էլ մնում են նրա հոգոյ հետ, որպէս զի հարկաւոր ժամանակին մարդկային հոգին ներկայանայ Օրմուզդի դատաստանի առաջ իւր պահապան հրեշտակի հետ միասին։

Զրադաշտի պատւերի համեմատ, Իրանցիները չպիտի պարծենան իրանց գործերով և յաջողութիւններով, որովհետև նրանք իրանց առաքինութիւններով պարտական են այն աստուածային հոգուն, որը միշտ նրանց հետ է ֆրավարշի կերպարանքով։

Դ.

Աստուածային բարութեան ներկայացուցիչների հետ մի շարքում գոյութիւն ունեն ոգիներ, որոնք թէև զօրեղ են, բայց և վնասակար են. սրանց վրա իշխում է չարի աստուած Ահրիմանը։

Հրեշտակների օգտակար գործունէութիւնը անհետևանք դարձնելու համար Ահրիմանը ստեղծել է չար ոգիներին—դևերին։ Դևերի պարագլուխներն են դարվանդները, որոնք համապատասխան են Օրմուզդի ամշասպանդներին։ Դարվանդները նոյնպէս թւով վեց են, որոնցից կը յիշենք Անդրամանահին հոգսերի և բարոյական տանջանքների ծնողն է՝ Աշա-Վահիստա հրեշտակապետի հակառակորդը։ Միւս դևերի շարքում տեսնում ենք. Աէս-

ման—բարկութեան ու բռնութեան դևը, Աստուվիդհոտուն—մահւան հանճարը, պահապան հրեշտակների ամենամեծ թշնամին, և այլն։

Դևերը լինում են արական և իգական։ Վերջիններին վերաբերում են դրուժները, որոնք զանազան կերպարանք են ստանում մարդկանց դայթակղացնելու համար. այդ կին-դևերի շարքում ամենավտանգաւորներն են Բիւրիտին-խորամանկութեան դևը, Նասուն—ապականութեան դևը, և Եահին—անամօթութեան դևը։ Միւս կին-դևերը կոչւում էին Պարիրիկաս և Եանիս։

Մազդէիզմի հետևողները, որքան ոյժ ունեն, պիտի կռւեն Ահրիմանի և նրա հպատակ չար ոգիների դէմ, որպէս զի նրանք չը մոլորեցնեն մարդկութիւնը և չը խորտակեն տիեզերքը։ Հաւատացեալները պիտի ոգևորւեն այն յոյսով, որ ապագայում բարին յաղթող է հանդիսանալու, իսկ չարը պարտութիւն է կրելու։ Այդ վարկեանը կարող են մոտեցնել ճշմարիտ հաւատացեալները իրենց աղօթքներով։ Զրադաշտը պահանջում է, որ հաւատացեալները ըստ կարելոյն յաճախ աղօթեն. աղօթեն Անսկզբնականին, աղօթեն Օրմուզդին, նրա հրեշտակապետներին և հրեշտակներին։ Միւս կողմից անհրաժեշտ են բազմաթիւ զոհաբերութիւններ և կեանքի սրբութիւն։

Դէպի Օրմուզդը իրանցին դառնում է հետևեալ աղօթքով. «Օ՜, Օրմուզդ, յաւիտեանս փայլող, լոյսով շողշողացող՝ այս աշխարհի անվերջ տևողութեան ընթացքում և մինչ յարութեան օրը՝ ընծայի՛ր ինձ բաղդաւոր ու փառաւոր կեանք։ Շնորհի՛ր ինձ առատ սնունդ, բարօրութիւն, բազմաթիւ երեխաներ, շնորհի՛ր ինձ դիտութիւն, քաղցրախօս լեզու, խելք և ապագան նախագուշակելու ընդունակութիւն, շնորհի՛ր ինձ ընդունակ երեխաներ, որոնք ինձ հնարաւորութիւն տան՝ դրախտին արժանանալու և ազատեն ինձ հարստահարութիւններից, շնորհի՛ր իմ հոգուն յաւիտենական հանգստութիւն»...

Պարսիկների մէջ աստուածութիւնը չէին պատկերացնում արձանագործութեան կամ նկարչութեան միջոցով։ Օրմուզդի պատկերը համարւում էր կրակը։ Ամբողջ բնութիւնը համարւում էր իբր մի փառահեղ տաճար։

Բարձրագոյն, նախայաւիտենական, վերին Աստուծոյ հրամանով Օրմուզդը ստեղծել է տիեզերքը 360 օրւայ ընթացքում և սրանից բաց՝ 5 օր էլ հանգստութեան է յատկացրել։

45	օրւայ	ընթացքում	նա ստեղծել է	երկինքը (սկսե. մարտի. 1-ց)
65	«	«	«	ջուրը «
75	«	«	«	երկիրը
30	«	«	«	ծառերը և բոյսերը
80	«	«	«	կենդանիներին
65	«	«	«	մարդուն

Օրմուզդը, ստեղծելով մարդկային զոյզը, միաժամանակ ստեղծել է և բեղմնաւորութեան տարրը՝ ի դէմս միստիկական եղան, որը զօրեղ է, բարի և անարատ։

Զարի ոգի՝ Ահրիմանը ստեղծում է ձմեռը, սառնամանիքը, անտանելի շոգը, թերահաւատութիւնը, արատները, կրքերը, ոճիրը, հիւանդութիւնները, հաշմանդամութիւնը, վնասակար և անմաքուր կենդանիները։ Ահրիմանը թէև չարիք ստեղծելու զօրութիւն ունի, բայց իւր արածների ու գործերի հետևանքը գիտակցելու և նախատեսելու ընդունակութիւն չունի։ Նա սպանում է մարդկային զոյգը և եղը, բայց սպանուած եղան մարմնից բուսնում են օգտակար բոյսեր և ծնւում է անասունների մի զոյգ—արուն և էգը. այդ զոյգը սկիզբ է տալիս 272 տեսակ զանազան անասունների, որոնցից ամենամեծ յարգանքը վայելում են՝ եղը, շունը և ջրշունը։ Իսկ սպանուած մարդկային զոյգի մարմնից նորից ծնւում ու յառաջ է գալիս մարդկութիւնը։

Մազդէականութեան հետևողները հոգին անմահ են համարում։ Մարդու մահից յետոյ հոգին ներկայանում է Սրաօշա, Միթրա ու Բիսնա իդէդների դատաստանի առաջ։ Եթէ այդ իդէդները անմեղ են գտնում հոգին, ապա ուղարկում են նրան դրախտ։ Հոգին նախ անցնում է Մինվակ անդունդի վրա ընկած Տչինվատ կամուրջը, որը միացնում է երկիրը երկնքի հետ, ապա մտնում է Գարատման կոչուած դրախտը։ Դրախտը ունի երեք աստիճան. ամենաբարձր աստիճանի վրա ապրում է Օրմուզդը իւր հրեշտակապետների հետ։ Իսկ եթէ հոգին ծանրաբեռնուած է զանազան մեղքերով, ապա Վիզարէսա դևը բռնում է նրան, շղթայում և կամուրջից նետում է դժոխքի անդունդը։

Դրախտը և դժոխքը գոյութիւն կ'ունենան մինչև ննջեցեալների ընդհանրական յարութիւնը, երբ կը յայտնուի Զրադաշտի երրորդ յաչորդը—Սաօշիաթը։ Այն ժամանակ կը կորուսուի Ահրիմանը իւր դևերի հետ միասին, կը քանդուի դժոխքը, կը սկսուի բարութեան ու սրբութեան թագաւորութիւնը։

Ե.

Կրօնական ծիսակատարութեան համար գոյութիւն ունէր քուրմերի Ատրավան կամ Մոգ կոչուած դասակարգը։ Բայց այդ դասակարգը սահմանափակուած չէր, որպէս Հնդկաստանի և Եգիպտոսի կաստաները, թէև ժառանգական էր, մանաւանդ միջիական ծագում ունեցող շատ ընտանիքների համար։

Քուրմը պարտաւոր էր պաշտամունք կատարել, հոգալ պատանեկութեան և առհասարակ բոլոր հաւատացեալների կրօնական դաստիարակու-

թիւնը։ Նա վարում էր մեղաթողութեան ծէսերը և կատարում էր կարճառօտ աղօթքներ ծննդեան, ամուսնութեան և մահուան դէպքերում։ Թաղման ժամանակ զոհաբերութիւն տեղի չէր ունենում։ Մարմինը տանում դնում էին բլուրների գագաթների վրայ կամ թէ բնակատեղիներից ու ջրերից հեռու, յատկապէս կառուցուած շէնքերի կտուրների վրա։ Այնտեղ դիշատիչ թռչունները և վայրենի գազանները լափում էին մարմինները և միայն մնացած ոսկորներն էին գերեզմանին յանձնում։

Զոհաբերութիւնը կատարւում էր միայն քուրմի ձեռքով։ Սեղանը կամ խարոյկը բացօդեայ էր։ Իրանցիների մէջ գոյութիւն ունէր կրօնական մենուամէնտի միայն մի տիպարը—ա թ է շ գ ա հ ը—մի տեսակ օջախ, ուր քրմերը պահպանում էին սրբազան կրակը։ Հաւատացեալները մատակարարում էին զոհաբերութեան հարկաւոր առարկաները. վառելու փայտ, թարմ միս, հ ա օ մ ա կոչուած բոյսը, որը հաւանդի մէջ ծեծելով, ստանում էին նոյն անունը կրող սրբազան խմելիքը։ Զոհաբերութեան ամենակարևոր գործը հ ա օ մ ա խմելիքի պատրաստելն էր։

Սրբազան արարողութեան ժամանակ քուրմը կրում էր իւր բերանին—պ ա յ տ ի գ ա ն ա—կոչուած կապանքը, որպէսզի իւր շնչով չը պղծէր կրակը կամ հ ա օ մ ա խմելիքը։ Իսկ ձեռքին քուրմը ունէր կանաչ ճիւղերի մի խուրձ, որով նա աղօթքի և մաղ-

թանքի ժամանակ սրբազան ջուր էր շաղ տալիս հանդիսականների վրա։

Բերուած մսի վրա քուրմը կատարում էր զանազան ծէսեր. այդպիսի միսը կոչւում էր զ ո ւ ր։ Քուրմը՝ կանգնած, խուրձը ձեռքին, աղօթք էր կարդում—և միսը ուտելով խմում էր հ օ մ կոչուած հեղուկը, սրա համար նշանակուած առանձին բաժակից։ Այդպիսով քուրմը ժողովրդի առաջ ճաշակում էր նուիրագործուած մսունքը՝ մսի և հօմի ձևով։ Հօմը երկու տեսակի էր. սպիտակ, որ ջրի կամ կաթի պատկերն էր ներկայացնում և դեղին՝—ոսկու գոյնի։ Վերջինս սիրուած խմելիք էր. նա բարձրացնում էր հոգին և ուրախ տրամադրութիւն էր տալիս նրան։

Քրմերի ամենագլխաւոր պարտաւորութիւնն էր սրբազան կրակի պահպանութիւնը։ Իսկապէս ասած, հաւատացեալները սրբազան կրակին էին նուիրում բոլոր նիւթերը՝ կաթը, հօմը, սերմնահատիկները, միսը որով և կերակրւում էին քրմերը։ Պատարագի համար քուրմը պիտի ունենար, ի միջի այլոց, պ է կ ա ն կոչուած դանակը և հ ա վ ա ն կոչուած բաժակը։

Պաշտամունքի ժամանակ քուրմը դառնում էր դէպի ժողովուրդը և, ձեռները դէպի երկինք բարձրացնելով, օրհնում էր ներկայ եղողներին ասելով. «խաղաղութի՜ւն լինի ձեզ հետ»։

Զրադաշտի կրոնը ունի անթիւ աղօթքներ, որոնք կամ երգի եղանակով կարդացւում էին կամ թէ կարդում էին երգի դաշնակցութեամբ։ Իւրաքանչիւր դէպքի կամ մաղթանքի համար գոյութիւն ունէր մի որոշ աղօթք։ Աղօթքները ուղղւած էին դէպի Օրմուզդը, հրեշտակապետները և հրեշտակները։ Իւրաքանչիւր աստղ, իւրաքանչիւր սար կամ գետ, բնութեան իւրաքանչիւր երևոյթ ունէր իւր առանձին աղօթքը։ Կեանքի բոլոր հանգամանքները ունէին իրանց պատշաճ աղօթքները։

Զրադաշտի ուսուցման համեմատ հաւատացեալների պարտաւորութիւնն է հոգալ քրմերի նիւթական կարիքները, որովհետև սրանք, կատարելով իրանց կոչումը, հնար չունէին իրանց գոյութիւնը ապահովելու անձնական աշխատանքով։ Քուրմը, որ ամենքի համար աղօթք է անում, պիտի պաշտպանութիւն գտնի ամենքի կողմից։ Հաւատացեալների ձեռքով ապահովւած լինելով, քուրմը կատարում է իւր պարտաւորութիւնները խնամքով, ցերեկ ու գիշեր աղօթք է անում աստուածավախութեամբ, սրբութեամբ ու ջերմեռանդութեամբ։

Զ.

Զրադաշտին վերագրւող սրբազան գրքերի թիւը 21 է, բայց սրանց մեծ մասը, ըստ իրանական աւանդութեան, Աղէքսանդր Մակեդոնացու հրամանով

այրել են։ Ներկայումս Զրադաշտի հետևող Ֆարսերը ունին ընդամենը 7 գիրք։

Սրբազան գրքերի գլխաւորը Զէնդ-Ավէստան է, որ կոչւում է նոյնպէս Վէնդիդադ-Զադէ Սա ամբողջ դաւանանքի համադումարն է։

Զէնդ-Ավէստան բաղկացած է երեք մասից.

1) Վէնդիդադ, որ պարունակում է իւր մէջ Օրմուզդի կողմից Զրադաշտին տրւած բերանացի խրատները և ցուցմունքները։ Վէնդիդադ նշանակում է. «տրւած դևերի դէմ»։ Այդ գիրքը բաժանւած է 22 մասերի կամ ֆարգարդների։ Առաջին ու երկրորդ ֆարգարդի մէջ գտնւում են Օրմուզդի յայտնութիւնները Զրադաշտին՝ իւր գործերին վերաբերեալ և Ահրիմանի՝ Աստուածութեան այդ յաւիտենական թշնամու արարքների մասին։ Հետևեալ տասնուերեք ֆարգարդները բացատրում են մաղդէականութեան հետևորդների պարտաւորութիւնները։ 18-դ և 19-դ ֆարգարդները աւետում են մեռեալների յարութիւնը և Օրմուզդի վերջնական յաղթանակը, փառաբանելով այդ աստուծոյ թագաւորութիւնն ու փառքը։ 20-դ ֆարգարդը խօսում է բնութեան բարեփոխելու մասին, որ տեղի է ունեցել Օրմուզդի ողորմութեամբ. 21-դ ֆարգարդը բացատրում է մարդու էութիւնը և որոշում է սիեղերքի տևողութիւնը։ 22-դ ֆարգարդը նւիրւած է Զրադաշտի միսսիային։

2) Վիսպէրէդ կոչուած ծիսակատարութեան գիրքը, որ բացատրում և արծարծում է կրօնի պաշտամունքը։

3) Եասնա—ծիսակատարութեան մի ժողովածու, որը արծարծում է զոհաբերութեան կարգը։

Վերջին երկու գրքերի մէջ ամենամաքուր և վեհ օրհնանքների հետ մի շարքում պատահում են չնչին մանրամասնութիւններ և ճշգրիտ ցուցմունքներ կրօնական ծէսերի մասին։

Միւս գիրքը կոչւում է Խորդ-Ավէստա։ Նա պարունակում է իւր մէջ այսպէս կոչուած Եշտը կամ թէ դանձերի (շարականների) ժողովածուն։ Այդ գրքի մէջ կան 18 հատուածներ, կրօնական գործողութիւնների վերաբերեալ, ցուցմունքներ կրօնական ծէսերի մասին և սուրբ դանձեր։ Ժամանակի ընթացքում Եշտի սկզբնական բովանդակութեան հետզհետէ աւելացել են նոր աղօթքներ, աւեաիքներ, պատէրներ, գրուած զէնդական, պահլաւական և պարսկական լեզուներով։ Այն ժողովածուն, ուր դիտեցած են բոլոր այդ հատուածները կոչւում է նոյնպէս Եշտ-Զադէ։

Ցիշուած գրքերից բաց դոյութիւն ունի, ի միջի այլոց, և Բունդէհէշ գիրքը, որ արարչագործութեան վերաբերող մի տրակտատ է, ուր խօսվում է արարածների ծագման և տիեզերքի կազ-

մակերպութեան մասին։ Այդ գիրքը համեմատաբար ամենանորն է. սրա բովանդակութեան մեծ մասը վերաբերում է Սասանեանների դարերշրջանին։

Է.

Զրադաշտի ուսուցման համաձայն, այն հաւատացեալն է կատարեալ, որը մաքուր է հոգով ու մարմնով։ Մարմնի մաքրութեան աննպաստ բոլոր հանգամանքները նախատեսուած են Զէնդ-Ավէստայի պատէրների մէջ։ Զրադաշտը վերաբերւում է դէպի ամէն մի անմաքրութիւն այնպիսի զզւանքով, որ ճիպոտներով ծեծելու պատիժ (դանակոծութիւն է) նշանակում այն մարդուն, որը ոտքը կը մրտցնի կեղտաջրի մէջ։

Անմաքուր կարելի է դառնալ երկու ճանապարհով. միջապէս և անմիջապէս։ Անմիջական մեղաւոր կամ համրիդ նա է, ով մի անմաքուր առարկայի է դիպել, օրինակ դիակի, գեշի, կրտրած եղունգների, կտրած մազերի, կամ թէ կնոջ հագուստին՝ նրա ամսականի շրջանում։ Պիտրիդ կոչուած մեղաւորը նա է, ով կպել է համրիդին, գիտակցաբար թէ պատահմամբ։ Որպէս զի նորից մաքուր դրութիւն ստանան, համրիդները և պիտրիդները պիտի ենթարկւէին մի շարք մաքրացումների, որ խստութեամբ որոշուած էին օրէնքով։ Մաքրացումը կատարւում էր առանձին, մի

կղզիացած տեղում, որտեղ չը պիտի լիներ ոչ ջուր, ոչ բուսականութիւն։ Առանձին պատրաստած տարածութեան վրա շարում էին կարգով տափարակ մեծ քարեր, որոնց վրայ տեղ էին գտնում մաքրացման ենթարկուող մեղաւորները։

Մաքրացումը կատարում էր քուրմը, որը վարժւած էր այդ գործի մէջ։ Մաքրացման ծէսը շատ բարդ է։ Քուրմը պիտի հոգար մաքրացման տեղի կատարեալ հարթութեան մասին, որպէսզի ջուրը ոչ մի տեղ կանգ չառնէր և լճակներ չը գոյացնէր։ Ջուրը պիտի ցայտումներ չանէր, ծիսակատարութիւնը պիտի տեղի ունենար պատշաճաւոր լրջութեամբ, որպէս զի մի քանի օտարոտի հանգամանքներ չը վնասէին հաւատացեալի ջերմեռանդութեանը։ Քուրմը ջուր էր ածում մեղաւորի վրա երկաթեայ և արճիճեայ մեծ գդալներով։

Երբեմն մաքրացման գործողութիւնը շարունակւում էր 9 օր, որի ընթացքում մեղաւորը կատարում էր լուացումը ջրով, անուշահոտ հեղուկներով, կովի մզով և այլն։

Ըստ Զրադաշտի կրօնի ամենամեծ մեղքն է՝ կրակի, ջրի և հողի պղծելը—որ տեղի էր ունենում, եթէ դիակ կամ դէշ էին գցում ջրի մէջ, կամ այրում էին կրակով։ Այդպիսի յանցանքը աներեալի էր և ամբարիշտը պիտի անպատճառ պատժւէր խիստ կերպով։

Մնացեալ մեղքերը, օրինակ՝ ստախօսութիւնը, երդմնազանցութիւնը, բռնութիւնը և այլն կարելի էր քաւել բարի գործեր կատարելով, օրինակ՝ վնասակար կենդանիներ ոչնչացնելով, ինչպէս՝ օձեր, կարիճներ, գորտեր, մկներ և այլն։

Կրօնական պատւէրների հետ մի շարքում Զրադաշտը տալիս է նաև խրատներ՝ բարոյական, հասարակական, տնտեսական և քաղաքական։ Զրադաշտի գլխաւոր ցանկութիւնն էր՝ վերածնել իրանական ազգը աշխատանքի միջոցով, սովորցնել նրան հողագործութեան լաւագոյն միջոցները, ապահովել ազգաբնակութեան աճեցողութիւնը։ Զրադաշտը ամենաազնիւ զբաղմունքն է համարում հողագործութիւնը, ուստի և մանաւանդ է լինում հողի մշակութեան աւելի լաւ միջոցների վրա։ «Հարկաւոր է—ասում է Զրադաշտը—գոգռել հողը, սիրել նրան, որպէս մի գեղեցիկ աղջկայ և պարտաւորացնել, որ արատ պտուղ բերէ»։

Օրմուզդը Զրադաշտին տւած պատւէրների մէջ յայտնում է, թէ այն մարդը, որ սերմանում է, համարեա կեանք է տալիս հարիւր էակների և նրա գործը հաւասար է 10,000 աղօթքի։

Հողագործութեան մէջ է կայանում ազգերի բարեկեցութիւնը—այդպէս է սովորցնում Զրադաշտը—Օրմուզդի համար ամենադուրեկան աղօթքը հողագործի աղօթքն է։

Զրադաշտը մատնացոյց է անում երկրի մշակութեան լաւագոյն եղանակների վրա։

Սերմեր ցանել միևնոյն է թէ դևեր փչացնել, և որքան աւելի կատարւի այդ գործը, այնքան զօրեղ կլինի դևերին հասցրած հարուածը։

Հողագործութեան հետ միասին Զրադաշտը մեծ ուշադրութիւն է դարձնում ոռոգման գործի վրա, որովհետև առանց այդ՝ չէ կարելի երկրից առատ արդիւնք ստանալ։ Զրանցքների միջոցով ջուր մատակարարելը առաջնակարգ աշխատանք է համարւում։ Զրանցքներ փորել նշանակում է կրօնական պաշտամունք կատարել։ Այս դէպքում պէտք է խնամքով գործել և մշտատև ուշադրութիւն ցոյց տալ։

Առհասարակ ջուրը մեծ նշանակութիւն ունի մազդէականութեան մէջ։ Ջուրը երկնքի թագուհին է, Օրմուզդի աղջիկն է։ Պիտի ամեն միջոց գործ դրւէր, որ ջուրը չը պղծւէր, և այդ կանոնը քանդողը պատժւում էր կաշեղէն մտրակով, կամ թէ վճարում էր 200 դիրխէմ տուգանք։

Իրանում ջրի պաշտելը բացատրւում է նոյնպէս երկրի սակաւաջուր բնաւորութեամբ և, երևի, մինչև Զրադաշտի օրերը գոյութիւն ունցող այն վատ սովորութեամբ, որ կենդանիների դէշերը նետում էին լճերի, գետակների և ջրհորների մէջ և այդպիսով վարակում էին կեանքին այնքան անհրաժեշտ տարրը։

Զրադաշտի ուսուցման համեմատ, աստուածահաճոյ գործ էր համարւում ջրային աղբիւրներ գտնելը, և այն մարդը, որը ջուր կը գտնէր, դուր կը գար Օրմուզդին։ Զրադաշտը հաւասարապէս ուշադրութիւն է դարձնում անասնապահութեան վրա, նոյն իսկ կանոններ է տալիս ոչխարների մերքաւորութեան, հօտերի սնունդի և հովիւների ընտրութեան մասին։ Նա պատւիրում է հոգ տանել և միւս օգտակար կենդանիներին։ Առանձին յարգանք է վայելում նրա աչքին շունը, մարդու հաւատարիմ ուղեկիցը։ Խիստ պատժի է ենթարկւում այն մարդը, որ կրծեծէ իւր շանը։ «Գողը և գայլերը— ասում է Զրադաշտը—տեսնելով այդպիսի վարմունքը (շան ծեծելը), կը դառնան փողոցների տիրապետները և ապահովութիւնը կը չքանայ»։ Իրանի մարդարէն սպառնում է մահւան պատժի ենթարկել այն մարդուն, որը կրկին ու կրկին կը ծեծէ շանը կամ վերքեր կը հասցնէ նրան։ Միւս կողմից շան համար էլ զանազան պատիժներ են նշանակւած։ Եթէ շունը խածնէ մարդուն, կամ որև է տնային կենդանու, առաջին անգամ պէտք է կորտրել շան աջ ականջը, երկրորդ անգամ՝ ձախ ականջը, երրորդ անգամ պէտք է վերք հասցնել նրա աջ ոտին, չորրորդ անգամ՝ ձախ ոտին, հինգերորդ անգամ կտրել պոչը։ Եթէ դարձեալ շունը կը շարունակէ խածնել—հարկաւոր է նրան սպանել։

Պատուիրած է լաւ կերակրել շանը, չտալ սոված շանը հում կամ թարմ ճարպ. հակառակ վարուողը պիտի պատժուի։

Ը.

Ընտանիքի կազմակերպութիւնը չը վրիպեց Զրադաշտի ուշադրութիւնից։ Ամուսնութիւնը պատուիրում է աշխարհականներին և հոգևորականներին։ Կինը, մազդէականութեան հայեացքով, մարդկային կեանքի անհրաժեշտ ուղեկիցն է։ Առանց կնոջ չկայ մարդու համար ոչ ուրախութիւն, ոչ կատարեալ բաղդաւորութիւն այս աշխարհում։ Համաձայն Վէնդիդատ կոչուած սրբազան գրքերի, անկին մարդը ցածր է ամեն մի արարածից։ Ամուսնական միութիւնը ամենազուրեկան գործողութիւնն է համարում Օրմուզդի աչքին։ Բազմակնութիւնը թէև թոյլատրւում էր, բայց շատ հազիւ էր պատահում։

Պսակադրութիւնը կատարւում էր հոգևորականի ձեռքով, հարսնացուի հօր կամ խնամակալի ներկայութեամբ, որը քուրմի հարցին պատասխանելով յայտնում էր թէ ինքը համաձայն է մարդու տալ իւր աղջկան կամ սանին։ Ապա քուրմը դառնալով դէպի փեսան ասում էր. «Դուք վերցնում էք այս աղջկան որպէս կին, որ նրանից ժառանգ ունենաք»։ Փեսան հաստատում էր քուրմի

խօսքը, որից յետոյ քուրմը արտասանում էր նէքա կոչուած հանդիսաւոր օրհնանքը, որ բաղկանում էր զլխաւորապէս բարոյական խրատներից և բարեմաղթութիւններից։ Այսպէս օրինակ.

«Յանուն Օրմուզդի

«Իմացէք ինչ մաքուր է և չը պղծուած։

«Պատշաճաւոր կերպով, բարիք գործելիս աշխատեցէք լաւ մտածել և լաւ խօսել։

«Հեռացէք ամեն մի վատ մտքից, չափաւորեցէք այն, ինչ որ վատ է ասուած, մի խօսքով փչացրէք վատ գործերը։

«Փչացրէք կախարդութիւնը։

«Ճշմարտութիւնը խօսեցէք այս աշխարհի դօրեղների առաջ։

«Բարեկամների շրջանում աշխատեցէք լինել սիրալիր և ունենալ բարեացակամ հայեացք։

«Զարութիւն մաք անել մերձաւորին։

«Զայրոյթի դէպքում չափը մաք անցկացնել։

«Կեղծ ամբիծ ստիպուած վատ բան մաք անել։

«Մաք ենթարկուել ժլատութեան, բռնութեան, նախանձին, ագահութեան, պարծենկոտութեան և ունայնութեան։ Օրէնքին մաք հակառակել։

«Մաք սեփականացնել ուրիշի կայքը և մաք ցանկանալ մերձաւորի կնոջը։

«Մի՛ք վիճիլ նախանձոտ մարդու հետ։

«Մի՛ք պաշտպանիլ ժլատին։

«Մի՛ք բարեկամանալ այն մարդկանց հետ, որոնք իրանց մերձաւորին չարութիւն են անում։

«Մի՛ք բարեկամանալ վատ բնաւորութիւն ունեցող և դէպի չարը հակուած մարդկանց հետ։

«Թշնամուն պատասխանեցէք մեղմութեամբ։

«Վատ գործ մի՛ք գործիլ, մանաւանդ հասարակ և անուսում մարդկանց ներկայութեամբ։

«Խելացի խօսեցէք ժողովատեղիներում և համեստութեամբ՝ թագաւորների առաջ։

«Աշխատեցէք աւելի փառք ունենալ, քան ձեր մայրը։

«Ոչինչ վատութիւն մի՛ք անիլ ձեր մօրը։

«Բարեկամ եղէք ձեր կնոջը, ձեր եղբայրներին և ձեր երեխաներին։

Զրադաշտը բարձր նշանակութիւն է տալիս իրանցի կնոջ և ընդունակ է համարում նրան՝ աչքի ընկնող դրութիւն ունենալու և նոյն իսկ տիրող լինելու։ Բայց մի կէտում մարդարէն անգութ ու անողոք է դէպի կինը և նոյն իսկ ենթարկում է նրան օտարակիզմի զարհուրելի պատժին։ Այդ բանը տեղի է ունենում դաշտանի ու ծննդաբերութեան ժամանակ, երբ մարդարէն կնոջը պղծուած է համարում։ Որքան էլ բարձր լինի կնոջ դրութիւնը, նա յիշեալ ժամանակամիջոցում ենթարկւում է առանձնացման և անջատման. նրան փակում են առանձին բնակարաններում, ուր նա ենթարկւում է մաքրացման անարդ և ձանձրալի գործողութիւններին։ Այդ ժամանակ կինը իրաւունք չունի կրակ տեսնելու, որովհետև նրա հայեացքն անգամ կարող է պղծել սրբազան տարրը։

Խիստ էր օրէնքը նոյնպէս դէպի «յանցաւոր» սիրահարութիւնը։ Այդ դէպքում եթէ մեղաւոր տղամարդը հրաժարւէր ամուսնանալուց կամ երեխային հոգ տանելուց, երեխայի մայրը իրաւունք ունէր յանցաւորին սպանելու։

Մեծ են Զրադաշտի ուսուցման ծառայութիւնները իրանական ժողովրդին։ Մարդարէն, որպէս տեսնում ենք, աշխատում էր կազմակերպել, կարգաւորել բարոյականութիւնը, սովորցնել իւր հայրենակիցներին։ Նրա նպատակն էր իւր խրատներով նպաստել իրանական ժողովրդի մտքի, ոյժի և ընդունակութեան զարգացման, որպէս զի նա կարողանայ ապրել բաղդաւոր, բարեկեցիկ. պաշտպանել իւր կայքը և բարեկեցութիւնը՝ իւր երդուեալ թշնամի թուրանցիների դէմ, որոնք միշտ պատրաստ էին խորտակելու իրանցոյ բարեկեցութիւնը։ Զրադաշտի նպատակն էր նոյնպէս՝ անհետացնել տգիտութիւնը, որը քայքայում է հասարակական

կաղմը, և ազատ ասպարէզ է տալիս վնասակար կրքերին։

Իրանական մարգարէի կրօնը մաղդէականութիւնից բաց ունի և ուրիշ անուններ, օրինակ՝ պարսիզմ, դուալիզմ, կրակապաշտութիւն և զորոաստրիզմ։

Թ.

Եւրոպական գիտնականներին վաղուց գրաւում էր Զրադաշտի հետաքրքիր ուսուցմունքը։ Զրադաշտի կրօնին վերաբերեալ առաջին աշխատութիւնը լոյս տեսաւ Ֆրանսիայում։ Սրա հեղինակը Բրիսսոնն էր, որը դեռ 1590 թւին բաւական ճշտութեամբ ու խնամքով հաւաքեց այն բոլորը, ինչ որ գրել էին հին գրողները Զրադաշտի կրօնի, նախնի պարսիկների դաւանանքի և ծէսերի մասին։

1754 թւին, Ecole des langues orientales-ի մի քսանամեայ ունկընդիր Անկէտիլ-Դիւպերոն, պատահմամբ Ծանօթացաւ Վէնդիդադի մի քանի թերթիկների հետ, որոնք պատկանում էին Օքսֆորդի գրադարանին և վճռեց, ինչպէս էլ լինի, տալ իւր հայրենիքին Զրադաշտի սրբազան գրքերի թէ բնագիրները և թէ թարգմանութիւններ։ Իւր նպատակին հասնելու համար Անկէտիլը անհրաժեշտ համարեց Հնդկաստան գնալ, ուր ապրում էին Ֆարսերը, այսինքն, Պարսկաստանից Իսլամի ձեռքով դուրս վռնդուած Զրադաշտի հետևողների սերունդները։

Անկէտիլ—Դիւպերոնը մտնում է որպէս հասարակ կամաւոր Հնդկական ընկերութեան ծառայութեան մէջ և հեռանում է Ֆրանսիայից։ Նա գնում է Պոնդիշերի և մի շարք բազմատեսակ արկածներից, դժւարութիւնից և արգելքներից յետոյ, երրորդ տարին հասնում է Սուրաթ, ուր Ֆարսերը ապրում էին։

Սուրաթում հանդիպեցին նրան ուրիշ տեսակի դժւարութիւններ—անվստահութիւն ու կասկածանք Ֆարսերի կողմից։ Միայն շնորհիւ այն հանգամանքի, որ այդ ժամանակ Ֆարսերի համայնքի մէջ տարաձայնութիւն էր տիրում, Անկէտիլին յաջողւեց ծանօթանալ Ֆարսերի դաւանապաշտութեան և սրբազան գրքերի հետ։ Համայնքի մէջ երկպառակութիւնները առաջ էին եկել մի գիտնական Ֆարսի, Դաստուր-Դարաբի օրացոյցը բարեկարգելու մասին արած, առաջարկութեան պատճառով։ Հնագաւանները, որ պահպանում էին հին կարգերը, յաղթող հանդիսացան և սպիպեցին Դաստուր-Դարաբին թողնել պատերազմի դաշտը։

Ահա այդ Դաստուր-Դարաբին դիմեց Անկէտիլը։ Երկար տատանումներից յետոյ Դարաբը համաձայնեց դաս տալ Ֆրանսիացուն դէնդական և պահլաւական լեզուներից։ Երեք տարի Անկէտիլը

Սուրաթում աշխատեց, զբաղելով յիշեալ լեզուներով, ուսումնասիրելով Ֆարսերի սովորութիւնները և բարքերը, հաւաքելով ձեռագիրները և իրան հարկաւոր բոլոր նիւթերը և, վերադառնալով Փարիզ 1762 թուին, ներկայացրեց թագաւորական գրադարանին 180 զէնդական, պահլաւական, պարսկական և սանսկրիտական ձեռագիրներ: Ինը տարի աշխատեց Անկէտիլը հաւաքուած նիւթերի վրա և վերջապէս 1771 թուին հրատարակեց իւր թարգմանած Զէնդ-Աւէստան, մի յաւելուածի հետ, որ վերաբերում էր Ֆարսերի սովորութիւններին ու բարքերին:

Զէնդ-Աւէստայի հրատարակուելը մի նշանաւոր դէպք էր գիտական աշխարհում և բանասէր հասարակութիւնը բաժանուեց երկու բանակի: Անգլիայում զէնդական բնագիրները անուանեցին ապոկրիֆներ և Օկսֆորդի երիտասարդ գիտնականներից մէկը, Վիլիամ Զոնսը սկսեց եռանդով քննադատել Անկէտիլի աշխատութիւնը: Վ. Զոնսը, թէև իւր ստացած կրթութեամբ ու դաստիարակութեամբ անգլիացի երիտասարդ, բայց քննադատութեան եղանակով Վոլտերի ճշմարիտ աշակերտը լինելով, հաւատացնում էր, թէ կամ Անկէտիլի հաւաքած բնագիրները կեղծ են, որև է ժամանակակից գրողի ստեղծագործութիւնն են, կամ թէ վերջապէս այդ աշխատութիւնը Զրադաշտինը չէ, այլ որևէ

ուրիշ հնադարեան գրողի գործ է, որովհետև Զրադաշտը չէր գրել մի այդպիսի բան, եթէ միայն նա փոքր իշատ աչքի ընկնող խելք ունէր: «Մեր դարում—ասում է Զոնսը ամօթ է լուսաւոր Եւրոպայի համար՝ հետաքրքրուել այն առասպելներով, որ մենք գտնում ենք Զէնդ—Աւէստայի մէջ. և եթէ այդ գիրքը նոյն իսկ իրօք նախնի Ֆարսերի ակտերի և կրօնական սկզբունքների ժողովածուն լինէր, այնուամենայնիւ չարժէ այնքան աշխատանք գործ դնելով ճանապարհուել այնպէս հեռու՝ այդ բոլորի հետ մեզ ծանօթացնելու համար»:

Պէտք է նկատել, որ յետագայում Վ. Զոնսը դարձաւ խորին հնութեան եռանդուն յարգող և, ի միջի այլոց, յայտնութիւն էր որոնում Զէնդ—Աւէստայի սրբազան գրքերի մէջ:

Գերմանիայում, չնայելով մի քանի գիտնականների յարձակումներին, Անկէտիլի գիրքը մեծ յաջողութիւն ունեցաւ, և ծառայում էր գիտնականների համար որպէս ձեռնարկ՝ Պարսկաստանին վերաբերեալ Աստուածաշնչի մէջ գտնուած կտորները բացատրելու համար:

Սիլվէստր դը Սասիի նոր գիւտերը, որոնք պարզաբանեցին պահլաւական զանազան մակդրութիւնները, հաստատեցին Անկէտիլի հաղորդած տեղեկութիւնները: Սրանցից յետոյ Զէնդ—Աւէստայի բովանդակութիւնը սկսեց ուսումնասիրել մի ուրիշ

Ֆրանսիայի դիտնական, սանսկրիտագէտ Բիւրնուֆը։ Անկէտիլի հաւաքած ձեռագիրների օգնութեամբ Բիւրնուֆը դաւաւ կրօնական աւանդութիւնների աւելի ճիշտ աղբիւրը, այսինքն Ֆարսական սրբազան գրքերից մէկի—«Եասնայնն 'ի» սանսկրիտական թարգմանութիւնը, որ կատարւած էր 14-դ դարում, երբ աստուածաբանական գիտութիւնը գանւում էր ծաղկած դրութեան մէջ։ Իսկ իւր դիտողութիւնները արծարծեց Բիւրնուֆը «Եասնայնն 'ի» մասին գրած երկերի բացատրութիւնների մէջ, վերստեղծելով այդպիսով համեմատական դիցաբանութիւնը և հնդկական Վէդաների ուսում-նասիրութեան հիմքը դնելով։

ժ.

Նախնի հայերը, քրիստոնէութիւն ընդունելուց առաջ, դաւանում էին համարեա նոյն կրօնը, ինչ որ իրանցիները։ Հին հայաստանի հատուածական աւանդութիւնների մէջ վերին Աստուածութեան—Արամազդի անունը հանդիպում է իւրաքանչիւր քայլում։ Նրա տաճարը գանւում էր Անի *) ամրոցում, որը հայոց Արշակունի թագաւորների զերեզմանատեղին էր։ Որպէս բարձրագոյն աստուա-

*) Պէտք չէ շփոթել Անի քաղաքի հետ, որը Բագրատունիների մայրաքաղաքն էր։

ծութիւն, Արամազդը հայ ժողովրդի մէջ կոչւում էր հայը բոլոր աստուածների։

Հին հայերը պաշտում էին, ի միջի այլոց, Միթրային, որը նրանց մէջ կոչւում էր Միհրա։ Միհրան աներևոյթ կրակի աստուածն էր, իսկ Միհրայի տեսանելի պատկերը համարւում էր արեգակը կամ լուսինը։

Մովսէս Խորենացու ասելով, հայերը հին ժամանակներում պաշտում էին երկու վիշապների, որոնց մէջ իբր թէ վերսրնակւած էին չար ոգիները։ Այդ վիշապները կարող են Ահրիմանի մոգքայումը համարել, որովհետև ըստ աւանդութեան, չար ոգիների պարագլուխը, Օրմուզդի թագաւորութեան վրա գործած անյաջող յարձակումից յետոյ, փախչելու մէջ փրկութիւն որոնելով, վիշապի կերպարանքով վայր ընկաւ երկնքից երկրի վրա։

Հանդերձեալ կեանքի մասին հայերը նոյն հայեացքն ունէին, ինչ որ Ֆարսերը։ Սորերկրեայ թագաւորութիւնը յայտնի էր հայերին «գժոզք» անունով (պարսկական գուզախը—Ահրիմանի բնակատեղին)։

Մազդէականութիւնը տարածւած էր նայնպէս Վրաստանում։ Ըստ աւանդութեան, սուրբ Նինան (Նունէն), Վրաստանի լուսաւորիչը, խորտակեց Արամազդի կուռքը Մցխէթում։ Մեր ժամանակ գոյութիւն ունեն նմանօրինակ սովորութիւններ օսե-

րի և ուրիշ լեռնաբնակ ժողովուրդների, մանաւանդ քարթուելական ցեղին պատկանող խէվսուրների մէջ։ Օրինակ՝ օսերի համարանքը դէպի ընտանիքի պահապան ոգիները շատ նման է Ավէստայի ֆրավաշների պաշտամունքին։ Ֆրավաշները առատաձեռն էին, քաջարի, գթասիրտ, հզոր և միաժամանակ շարժուն, որպէս թռչունները և թեթև, որպէս քամին։ Այդ բոլոր յատկութիւնները, օսերի կարծիքով, ունին նոյնպէս հանգուցեալ նախնիների հոգիները։ Օսերի ժողովրդական առասպելաբանութիւնը նման է Ավէստայի կրօնին այն բանով, որ նա էլ տնային օջախը առանձին պաշտամունքի առարկայ է համարում։ Ամիրանի մասին գոյութիւն ունեցող օսական առասպելի մէջ հեշտ է տեսնել Ավէստայի Ահրիմանի պատկերը։ Օսերի առասպելների մէջ Ամիրանը ներկայանում է որպէս մի բռնագատ, որը մարդկանց հանգիստ չէր տալիս և վիճում էր թէ սրբերի և թէ Աստուծոյ հետ։

Մանաւանդ ակներև են իրանական սովորութիւնների մնացորդները խէվսուրների մէջ, որոնք բնակւում են Թիֆլիզի նահանգի Թիոնէթի գաւառում։ Օրինակ՝ խէվսուրների գերեզմանները տարածւած են բնակատեղիներից, անտառից և ջրերից հեռու գտնւող լերկ բարձրութիւնների վրա։ Դիակները դրւում էին այդ գերեզմանների մէջ այն-

պէս, որ հողին չը դպչէին։ Գերեզմաններում փորւած անցքերը ազատ մուտք էին տալիս թռչուններին և գազաններին։ Խէվսուրների թաղման ծէսերը յիշեցնում են Ավէստայի իրանցիների նոյնանման սովորութիւնները։ Նրանց ծէսը նոյնն է, նրանք խուսափում են դիակից և Զրադաշտի ժամանակի իրանցիների նման, դնում են ննջեցեալներին առանձնակի կառուցւած մատուռի մէջ։

Խէվսուրները նոյն հայացքները ունեն մաքուրի և անմաքուրի մասին կամ պղծւելուն վերաբերեալ, ինչպէս նախնի իրանցիք. նրանց մէջ էլ ծրնդաբերութիւնը, դաշտանը, կարած մազերը և եղունգները կապ ունին պղծւելու հնարաւորութեան հետ։ Խէվսուրների և փշավների մէջ, ցանկապատից փոքր հեռու, կայ մի փոքրիկ տնակ, ճիպոտներից հիւսած, որ կոչւում է «Բօսէլօ». այդ տնակում պիտի անցկացնէ կինը դաշտանի օրերը, իւրաքանչիւր ամիս։ Մաքրացումը, ինչպէս և նախնի Ֆարսերի մէջ, կատարւում է կովի մէզի միջոցով։

Վիրական ցեղին պատկանող Թուշերի մէջ ծրնելու պատրաստւող կինը պիտի հեռանայ գիւղից և խուլ, անբնակ անկիւնում, ուր ոչ մի մարդու ոտք չէ դպչում, ծնէ իւր երեխային և մնայ այնտեղ հետևեալ 40 օրւայ ընթացքում։

Հոգևորականի «դաստուր» անունը խէվսուրների մէջ՝ Ավէստայի քուրմի ճշգրիտ տիտղոսն է։

Մ. Յ. ԱՐԱՄԵԱՆՑԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

Շուտով լոյս են տեսնելու

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԵՏԵՒԵԱԼ ՀԱՄԱՐՆԵՐԸ

Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԻ

Հեղինակութեամբ

№ 1 Վազի մշակութիւնը (արդէն լոյս են տեսել.)
№ 2 Գինեգործութիւն ընդարձակ պատկ.
№ 3 Ջերամապահութիւն » »
№ 4 Մեղուապահութիւն » »
№ 5 Բամբակի մշակութիւնը.
№ 6 Ծխախոտի մշակութիւնը.
№ 7 Այգեգործութիւն, (Մրգաբեր այգի)։
№ 8 Հացաբոյսերի մշակութիւնը I, II, III գիրք։
№ 9 Բանջարանոց։
№ 10 Անասնապահութիւն—գիրք I Տաւարապահութիւն II գիրք—Ձիապահութիւն. III գիրք Ոչխարապահութիւն, խոզապահութիւն.
№ 11 Կաթնատնտեսութիւն։
№ 12 Թռչնապահութիւն։

ՀՈՒՐՈՒ ՎՂՈՒԹՅՈՒՆ Ի ... ԱՄԱՍԻԱՅԻ ... ԱՄԱՍԻԱ ... ՀԱՅԿԱԿԱՆ ... ՄԱՏԵՆԱՐԱՆ

ԲԻ. Ա. ԲՈՂՈՒՂԼԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Առաջին օգնութիւն մինչև բժշկի գալը (սպառ.) 5 կ.
2. Վարակիչ հիւանդութիւններ . . . . . 5 »
3. Ի՞նչ է սիֆիլիսը . . . . . 5 »
4. Առողջապահական զրոյցներ . . . . . 5 »
5. Ի՞նչ է ժուժկալութիւնը . . . . . 5 »
6. Ի՞նչ է անառակութիւնը . . . . . 5 »
7. Վենեբական ախտեր . . . . . 2 »
8. Աշակերտի առողջապահութիւն . . . . . 10 »
9. Մեր նեարդերը . . . . . 10 »
10. Սիֆիլիս (բարեփոխուած) . . . . . 10 »
11. Առողջ հոգին առողջ մարմնի մէջ . . . . . 10 »
12. Գեղձախտ (զօլոտուխա) . . . . . 15 »
13. Ո՞վ է յանցաւորը . . . . . 15 »
14. Կարիք և բարեգործութիւն . . . . . 15 »
15. Ժառանգականութիւն և դաստիարակութիւն . 15 »
16. Մանկավարժական համառօտ զրոյցներ . . . 25 »
17. Մարմնամարզութիւն (25 պատկերով) . . . 20 »
18. Առողջապահական նուէր նորատի կանանց . . 15 »
19. Կինը և տղամարդը . . . . . 5 »
20. Վիրաբուժական հիւանդութիւն և օպերացիա . 15 »
21. Ի՞նչ է կաշու հիւանդութիւնը . . . . . 15 »
22. Երիտասարդութիւն և ծերութիւն. . . . . 20 »
23. Առողջ ու հիւանդ երեխայի ոգին . . . . . 20 »
24. Ուղղղի սիֆիլիսը (գլխի և ողնաշարի) . . . 20 »
25. Ստամոքսի կատարը . . . . . 25 »
26. Քուն և երազ . . . . . 25 »

(Մեծագիր պատկեր «Քուն և երազ» շքեղ թղթի վրայ առանձին 10 կ.)

ԴԻՄԵԼ՝ Թիֆլիս Կենտրոնական և Գուտաենբերգ Բաքու Պրոմեթէուս գրախանութներին.

ՀՀ Ազգային գրադարան
NL0173628

Հ ԱՐՄ. Ч-809

ՅՐԿՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵՒԵԱԼ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱ՝ ՅԻ ԹԻՒՆՆԵՐԸ.

1. Բեօրնսօն՝ կազմեց Ե. Թոփչեան . . . 10 կ.
2. Մահմեդ՝ » » » . . . 7 »
3. Մեսրոպ Մաշտոց՝ կազմեց Ե. Թ. . . . 5 »
4. Սահակ Պարթև՝ » » . . . 5 »
5. Հատուպտման՝ » » . . . 15 »
6. Մեծն Ներսէս՝ » » . . . 5 »

Շուտով լոյս է տեսնելու՝

1. Պուշկին.

Պատրաստ է տպագրութեան համար՝

1. Ընտրութիւն կաթնտուների՝ Գ. Մեծատուրեանի.

Պատրաստուում են նոր հրատարակութիւններ։

ԳԻՆՆ Է 7 ԿՈՊ.

ԴԻՄԵԼ՝ 1) С.-Петербургъ: И. М. Арамянцъ Ямская 38.

2) Тифлисъ: Книжный магазинъ. Гуттенберъ.

3) Баку: Т-во „Прометеусъ" Красноводская д. Амировыхъ.

«Պուշկինեան Արշաւատիպ». Ս.-Պետերբուրգ, Լեշտուկով փ. տ 4.